ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.
amirjanyan.hasmik@rambler.ru
ID 0009-0002-4363-0961
DOI:10.59523/1829-4596.2025.2(31)-130

ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԳՐԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ՀԱՄԱՐ (1895 Թ.)*

Ամփոփում

1836 թ. «Պոլոժենիե»-ի ընդունումից հետո 1837 թ. բացվում է Էջմիածնի լուսավորչական սուրբ Սինոդը և ներդրվում է հայ եկեղեցու կառավարման սինոդային ձևը: Բացվում են կոնսիստորիաներ, որով սահմանափակվում էին Ամենայն հայոց կաթողիկոսի և թեմական առաջնորդների իրավունքները, ուժեղացվում պետության միջամտությունը եկեղեցու գործերին, իսկ կաթողիկոսին հաստատելու վերջնական իրավունքը վերապահվում էր ռուսական կառավարությանը: Թեմական առաջնորդին ևս նշանակում էր ռուսաց կայսրը՝ հայոց կաթողիկոսի կողմից առաջադրված թեկնածուներից: Այսուհետ թեմական առաջնորդը պարտավոր էր տարեկան հաշվետվություն ներկայացնել Էջմիածնի սինոդին:

Սինոդի 1894 թ. փետրվարի 15-ի թիվ 527 «Հրաման Նորին կայսերական Մեծութեան ինքնակալին Ամենայն Ռուսաց

---

* *Ներկայացվել է 28.VIII.2025 թ., գրախոսվել է 15.IX.2025 թ., ընդունվել է տպագրության 22.XII.2025 թ.:*

ի լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի առաջնորդ թեմին հայոց Վրաստանի եւ Իմերէթի գերապատիւ Գէորգ եպիսկոպոսի» կարգադրությամբ Աստրախանի հայոց թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանցը նշանակվում է Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ: Նա պաշտոնավարում է մինչև 1904 թ. հունվարի 8-ը:

Այդ պահին թեմում առկա էին բազմաթիվ խնդիրներ, ուստի նորանշանակ եպիսկոպոսը ձեռնամուխ է լինում որոշակի բարենորոգչական աշխատանքների:

Բանալի բառեր՝ արքեպիսկոպոս, Գևորգ Սուրենյանց, Վրաստանի և Իմերեթի թեմ, Հայ Առաքելական եկեղեցի, կանոններ, հոգևորականություն, թեմական առաջնորդ:

Ներածություն

XIX դ. 30-70-ական թթ. Հայ եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի[1] կենտրոնական իշխանության ձևավորումն ավարտուն տեսք չստացավ: 1881 թ. Կովկասի փոխարքայության վերացումից հետո թեմերում կուտակված խնդիրներն առավել սրությամբ շարունակվեցին: Խնդիրներ կային թեմական կառավարման գրեթե բոլոր ոլորտներում: Հատկապես խնդրահարույց էր գործակալների և երեսփոխանների գործունեության կարգավորումը[2]:

Գևորգ Սուրենյանցին թեմական առաջնորդի պաշտոնում նախորդած գործիչների կողմից թեմական վարչական կառույցում կա՛մ լուրջ փոփոխություններ չիրականացվեցին, կա՛մ էլ

---

[1] Վիրահայոց թեմի ստեղծման ժամանակաշրջան է համարվում XII դարի 70-ական թթ. (**Աբրահամյան.** 1964, 97):
[2] **Գրիգորյան.** 2020, 40:

դրանք ավարտին չհասցվեցին[3]: Իսկ 1892 թ. թեմական առաջնորդ Մամբրե եպիսկոպոս Սանասարյանի (1889 - 1892) մահվանից հետո երկու տարի այդ պաշտոնը թափուր մնաց:

Որպես նորանշանակ թեմական առաջնորդ՝ Գևորգ Սուրենյանցը նախ շրջագայում է թեմում, «...որտեղ ցրուած ժողովուրդը զրկուած է հոգևոր մխիթարութիւնից և բազմաթիւ հոգեվոր կարիքներ ունի»[4], այցելում հայկական եկեղեցիներ, դպրոցներ[5]: Նրա նշանակման պահին Վիրահայոց թեմում կար 356 եկեղեցի և 14 վանք[6]: Շրջագայության արդյունքում եպիսկոպոսն ականատես եղավ բազմաթիվ խնդիրների ու բացթողումների: «Թիֆլիսի հայ քահանաները ...յայտնի են իրենց անշարժութեամբ ...նրանցից շատ քչերի մէջ կըգտնէք մի հետաքրքրութիւն, մի շարժում դեպի ընդհանուր, ընկերակցական գործունէութիւն ... »[7]:

Որպես առաջին քայլ, Գևորգ Սուրենյանցը 1894 թ. մարտի 5-ին հատուկ հրահանգով[8] Թիֆլիսից դիմում է վրացահայ հոգևորականներին՝ կոչ անելով հոգևոր պարտականությունները բարեխղճորեն կատարել: Այնուհետև գումարվում են ժողովներ, ստեղծվում կանոնադրություններ, կազմվում հաշվետու հանձնաժողովներ՝ հոգաբարձուների, գործակալների, երեցփոխանների վերաբերյալ, որի նպատակն էր ստուգել նրանց հաշիվները և, անօրինականություններ հայտնաբերե-

---

[3] **Գրիգորյան.** 2020, 21-49:
[4] «Արարատ». 1895, թիւ Ե, 172:
[5] «Նոր դար». 1894, №№ 30, 43:
[6] «Արարատ». 1902, թիւ Ա, 63:
[7] «Նոր դար». 1894, № 158:
[8] Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 541, թ. 17:

լու դեպքում, հայտնել թեմական իշխանություններին[9]:

Սեպտեմբերի 2-ին գումարվում է Թիֆլիսի քահանաների միաբանական ժողով, որը վարում էր թեմակալ առաջնորդը: «Նոր դարի» թղթակիցն այդ առիթով գրում է. «...ուրախալի է, որ լինում են դեպքեր մեր քահանայական դասի մեջ, որոնք շօշափում են քահանայական դասի և ժողովրդին վերաբերեալ խնդիրներ»[10]:

Սեպտեմբերի 28-ին Թիֆլիսի առաջնորդարան են հրավիրվում ավագ քահանաներն ու երեցփոխանները՝ հոգևոր բնագավառում առկա խնդիրների մասին խորհրդակցելու[11]: Ժողովը նաև պետք է քններ քահանայական դասի ներսում ծագած վեճերը, որոշումներ կայացներ, որոնք նախքան գործադրվելը պետք է հավանության արժանանային կոնսիստորիայի կողմից[12]:

Իրագործված քայլերը որոշակի արդյունք են տալիս: Պատահական չէ, որ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, որի ներկայացմամբ Գևորգ Սուրենյանցը նշանակվել էր թեմակալ առաջնորդ, իր գոհունակությունն է հայտնում եպիսկոպոսի անձնվեր աշխատանքի համար և 1895 թ. հունվարի 14-ի կոնդակով նրան շնորհում արքեպիսկոպոսի աստիճան[13]:

Գևորգ Սուրենյանցը, սակայն, գալիս է եզրակացության, որ թեմի հոգևոր կյանքի կարգավորման համար անհրաժեշտ է գրավոր կարգադրություն՝ որին անվերապահորեն պետք է

---

[9] «Նոր դար». 1894, №№ 43, 77:
[10] «Նոր դար». 1894, № 158:
[11] «Նոր դար». 1895, №№ 175, 176:
[12] «Մշակ». 1894, № 110:
[13] «Տարազ». 1895, № 2; «Մշակ», 1895, № 6:

հետևեր ամբողջ հոգևոր դասը: 1895 թ. նրա կողմից կյանքի է կոչվում և տպագրվում է «Կանոններ Վրաստանի եւ Իմերէթի թեմի հայ եկեղեցիների գործակալների եւ երեցփոխանների հրահանգութեան համար» խորագիրը կրող կանոնների շարքը[14], որոնցում հաշվի էին առնված նաև Ս. Էջմիածնի Սինոդի հրամանները:

«Կանոնները» բաժանվում են երկու մասի. հոգևոր գործակալների համար գրված՝ «Կանոնք վասն Գործակալաց եկեղեցեաց Հայոց Տփխիսի և վիճակի նորին...», և երեցփոխանների համար գրված՝ «Կանոններ Վրաստանի և Իմերէթի թեմի Հայ եկեղեցիների երեցփոխանների հրահանգութեան համար...»:

Երկու դասերի ընտրությունը պատահական չէր. գործակալների միջոցով վերահսկվում էր թեմի ամբողջ հոգևոր գործունեությունը: Իսկ երեցփոխանները վարում էին թեմի տնտեսական կյանքը, այդ թվում՝ հասույթների և կալվածքների կառավարումը: Նրանց գործունեությանը սերտորեն առնչվում էր նաև թեմի ֆինանսա-տնտեսական ոլորտում տեղ գտած չարաշահումների և յուրացումների վերացման հարցը[15]:

Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի հրատարակած «Կանոնները» հոգևոր գործակալների պարտականությունների և իրավունքների մասին

«Կանոնների»՝ գործակալներին վերաբերվող մասում առանձնացված են Թիֆլիսի և շրջակա գյուղերի վերահսկման «Գործակալ եկեղեցեաց Հայոց ա. մասին Տփխիսոյ» և «Գոր-

---

[14] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 1-16:
[15] **Գրիգորյան.** 2020, 40:

ծակալ եկեղեցեաց Հայոց բ. մասին Տփխիսոյ» հատվածները:

Ա մասի գործակալների պարտականությունն էր՝ հետևել Թիֆլիսի թվով 14 և շրջակայքի գյուղերի 11 եկեղեցիներին ու վանքերին: Բ մասի գործակալների տրամադրության ներքո էր քաղաքի 11 և շրջակայքի գյուղերի 12 հոգևոր կառույցների վերահսկողությունը:

Այնուհետև թվարկվում են գործակալների պարտականությունները. հաճախակի շրջագայել եկեղեցիներով՝ հսկել հոգևոր դասի բարեխիղճ պաշտոնավարումը, որ հոգևոր արարողությունները կատարվեն ճիշտ և ժամանակին՝ «ըստ կանոնոց և նախնաւանդ սովորութեան հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ»[16]: Արքեպիսկոպոսն ականատես էր եղել, որ քահանաները եկեղեցի էին հաճախում հերթափոխով: Այսուհետև սահմանվում է, որ եկեղեցի պետք է հաճախել ամեն առավոտ և երեկո[17]: Պահանջվում էր նաև ժամերգությունը կատարել պատշաճ, Սուրբ Մկրտություն կատարել և Սուրբ խորհուրդներին հետևել մեծ զգուշությամբ ու երկյուղով՝ «որպէս զպաշտամունսն եւ զընթերցմունս Աստուածաշունչ բանիցն»[18]: Նշված կետերից զգացվում է, որ թեմի հոգևոր կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ արարողակարգերից մինչև եկեղեցական պարագաների պահպանություն, բարձիթողի վիճակում էին, տարածված էին անօրինականությունները: Արքեպիսկոպոսը պահանջում էր, որ մկրտությունը կատարվի եկեղեցում, այլ ոչ թե տանը, «բացառութիւն ... ի

---

[16] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 3:

[17] «Նոր դար». 1895, № 176:

[18] Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 541, թ. 17:

դէպս յարգելի և ստիպառիթ պատճառաց»[19]: Վիրահայոց թեմի ամենակարևոր բացթողումը թերևս վարչական վարույթի անկատարությունը, անգամ գրեթե բացակայությունն էր: Պաշտոնավարման առաջին իսկ օրերից Գևորգ Սուրենյանցը պահանջում է հոգևոր բոլոր գործարքներն արձանագրել[20]: «Կանոններում» ևս շեշտադրվում է, որ գործակալը պարտավոր է կանոնավոր արձանագրել եկեղեցական գրանցամատյանները, յուրաքանչյուր ամիս ստուգել այն, հետևել, որպեսզի մատյանները ստորագրված լինեն միաբանների կողմից և ապահովել դրանց պահպանումը: Անօրինականություններից խուսափելու նպատակով արքեպիսկոպոսը գործակալներին պարտավորեցնում է վերահսկել երեցփոխանների ընտրության գործընթացը, ընտրել արժանավոր անձանց, և «ոչ երբէք անկեալք ընդ դատաստանաւ և ընդ տուգանօք, կամ յայտնեալք նախկին պաշտօնավարութեամբ իւրեանց իբրև անօգտակարգ»[21]:

Գործակալները պարտավորվում էին խստագույնս վերահսկել հոգևոր կառույցների պահպանման, վերակառուցման աշխատանքները, դրանցում կառուցողական թերություններ կամ շինություններից վտանգ նկատելու դեպքում անհապաղ հայտնել թեմական առաջնորդին:

Արքեպիսկոպոսը չի անտեսում նաև հոգևորականների բարի համբավի ու հեղինակության, արտաքին տեսքի կարևորությունը. «Ի նոքա ունիցին համաձայն կոչման իւրեանց զբարի, պարկեշտ և խոհեմ վարո և զի օրինակ բարեաց հանդի-

---

[19] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 4:
[20] **Բէհբուդեան**. 2005, 39:
[21] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 6:

սասցին նոքա ժողովրդեան անբամբաս վարուք»[22]: Քահանաներից պահանջվում է կրել միանման շուրջառներ[23]:

Բացի պարտականություններից, Գևորգ Սուրենյանցի «Կանոնները» գործակալներին վերապահում են նաև իրավունքներ: Դրանք վերջիններին իրավունք են տալիս ոչ միայն վերահսկել հոգևոր դասի գործունեությունը, այլև որոշակի տեղային պատժամիջոցներ կիրառել: Այդ գործառույթով գործակալները, ըստ էության հոգևոր կառավարության գործադիր մարմնի պարտավորություններ էին ստանձնում: Այսպես, օրինակ, «Իրաւունք գործակալաց» բաժնում նշվում է, որ գործակալները կարող են անհարգելի պատճառով եկեղեցուց հաճախակի բացակայող և պարտականություններն անփույթ կատարող պաշտոնյաներին զգուշացնել մեկից երեք անգամ, այնուհետև՝ «հանել իբրև տուգանս մասն ինչ յարդեանս նորա և առաքել առ հոգևորն իշխանութիւն»[24]: Զանցառուի ցածր դասի եկեղեցական լինելու դեպքում գործակալն ընդհուպ իրավունք էր ստանում նրան զրկել գանձանակադրամից, անգամ ժամանակավորապես հեռացնել եկեղեցուց:

Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի հրատարակած «Կանոնները» երեցփոխանների պարտականությունների և իրավունքների մասին

«Կանոնների» երկրորդ մասը, ինչպես նշվեց, վերաբերում է երեցփոխանների իրավունքներին ու պարտականություններին: Եկեղեցական գույքի տեղային կառավարումը

---

[22] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 3:
[23] «Նոր դար». 1895, № 175:
[24] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 6:

պատկանում էր անմիջապես տվյալ եկեղեցու երեցփոխանին, որի գործունեությունը, բացի Հայոց հոգևոր բարձրագույն իշխանությունից, վերահսկում էին նաև ծխականներից ընտրված «հաշվատեսները» (հաշվապահները) և ծխական ժողովը:

Երեցփոխն ընտրվում էր եռամյա ժամկետով և ծառայության ժամկետը լրանալուց հետո կարող էր վերընտրվել, եթե նրա գործունեությունը բխել է եկեղեցու շահերից: Արքեպիսկոպոսը հիշեցնում է, որ ըստ սահմանված կարգի, երեցփոխանները «իննամեա յօգուտ եկեղեցու հաւատարիմ և արդիւունաւէտ ծառայութիւնը լրացնելուց յետոյ վարձատրւում են դորա համար սահմանուած կարգով»[25]: Արքեպիսկոպոսի պահանջն էր, որ Հայոց եկեղեցու երեցփոխաններն ընտրվեն իրենց բարեխիղճ գործունեությամբ հասարակության համակրանքին արժանացած ծխականներից: Թեմական առաջնորդը պարտավորեցնում է, որ յուրաքանչյուր եկեղեցում պահվի մատյան, որում ճշգրիտ և մանրամասն արձանագրվեն եկեղեցու անշարժ գույքը, ծախսերն ու եկամուտները: Երեցփոխի ընտրությունից հետո մատյանը գույքի ցուցակներով հանձնվում էր նրան: Նա պարտավորվում էր վերահսկել իրեն հանձնված գույքը, հոգալ եկեղեցու տնտեսական գործունեությունը, առօրյա ծախսերը և ամեն տարվա վերջում մեկ ամսվա ընթացքում հաշվետվություն ներկայացնել[26]:

Այսպիսով, արքեպիսկոպոսը ոչ միայն վերահաստատում էր երեցփոխանների հաշվետվության կարգը, այլև՝ վերահսկողություն էր սահմանում վերջինների գործունեության վրա: Նրանք պարտավոր էին նախորդ տարվա հաշվետվութ-

---

[25] **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց**. 1895, 10:
[26] «Նոր դար». 1895, № 176:

յունը ներկայացնել հաշվատեսներին և ծխական ժողովին, իսկ վերջինիս կողմից կայացված որոշումը մատյանի հետ միասին ուղարկվում էր վիճակային կոնսիստորիային:

Ինչ վերաբերվում էր եկեղեցու հասույթներին, ապա երեցփոխը պարտավոր էր գումարները ներդնել արքունի կամ հասարակական դրամատներում՝ եկեղեցու անունով շահեցնելու (կրկնապատկելու) նպատակով կամ դրանցով գնել պետական կամ պետությունից ապահովագրված տոկոսաբեր արժեթղթեր: Արգելվում էր նմանօրինակ գումարները մասնավոր անձանց կամ հաստատություններին հանձնել, անօրինական կարգով մոմավաճառությամբ զբաղվել և այլն[27]:

Այսպիսով, ներդրվում էր վերահսկման եռաստիճան համակարգ, որի նպատակը եկեղեցու եկամուտների՝ անօրինական կարգով գործածության կանխումն էր:

Եզրակացություններ

Գևորգ Սուրենյանցի կյանքի կոչած «Կանոնները» նպատակ ունեին ոչ միայն վերացնելու Վրաստանի և Իմերեթի հայկական թեմում գոյություն ունեցող թերություններն ու անօրինականությունները, թեմում ներքին կարգուկանոն հաստատել, այլև հոգևոր վարչական կառավարումը դնել ամուր իրավական հիմքերի վրա: «Կանոններն», ըստ էության, թեմի հետագա կառավարման հիմք հանդիսացան:

Գրականության /Referenses/ Литература

1. **Աբրահամյան Ա.** 1964, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, «Հայաստան»

[27] «Արծագանք». 1895, № 123:

հրատ., 484 էջ:
Abrahamyan A. 1964, Brief Outline of the History of Armenian Diaspora Communities, v. 1, Yerevan, “Hayastan”, 484 p.

2. Եկեղեցի Հայաստանեայց, Վրաստանի և Իմերէթի թէմ 1895, «Արարատ», Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, թիւ Ե, էջ 172-174:
The Armenian chuch, Georgian-Imeretian diocese 1895, “Ararat” Vagharshapat: Printing House of the Mother See, № 5, pp. 172-174.
3. «Արձագանք» շաբաթաթերթ 1895, Թիֆլիս, № 123:
Newspaper “Ardzaganq” 1895, Tiflis, № 123.
4. **Բէհբուդեան Ս.** 2005, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, տպ. Մուղնի, 2005, 712 էջ:
Behbutyan S. 2005. Documents and Materials from the History of the Armenian Church. B. 13. Yerevan: Mughni puplishing. 712 p.
5. **Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց.** 1895, «Կանոններ Վրաստանի եւ Իմերէթի թեմի հայ եկեղեցիների գործակալների եւ երեցփոխանների հրահանգութեան համար», Տփխիս, տպ. Մ Շարաձե, 16 էջ:
Gevorg Archbishop Sueneanc. 1895, The Rules written for the clergy of the Georgian-Imeretian diocese, Tiflis: M. Sharadze, 16 p.
6. **Գրիգորյան Վ.** 2020, Հայ Առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցը (XIX դ 30-ական թթ. - XX դ. առաջին տասնամյակին), թեկ. ատենախոսություն, Երևան, 145 էջ:
Grigoryan V. 2020, Administrative management system of the Georgian-Imereti diocese of the Armenian Apostolic Church in

the 30s of the XIXth century - the first decade of the XXth century, Dissertation for the degree of Doctor of History. Yerevan,145 p.

7. Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 53, g. 1, գ. 541, թ. 17:
National Archiv of Armenia, f. 53, l. 1, w. 541, p. 17.
8. **Մխիթար վարդապետ.** 1902, «Տեղեկագիր» Ա, Բ, Գ, Դ, 1900 թ., «Արարատ», Էջմիածին, թիւ Ա, էջ 53-63:
Mghitar Vardapet. 1900, Terekagir, A,B,C,D, 1900, "Ararat", Echmiadzin, № 1, p. 53-63.
9. «Մշակ» օրաթերթ 1894, Թիֆլիս, № 110:
Newspaper "Mshak" 1894, Tiflis, № 110.
10. «Մշակ» օրաթերթ 1895, Թիֆլիս, № 6:
Newspaper "Mshak" 1895, Tiflis, № 6.
11. «Նոր դար» օրաթերթ 1894, Թիֆլիս, №№ 30, 43, 77, 158:
Newspaper "Nor Dar" 1894, Tiflis, №№ 30, 43, 77, 158.
12. «Նոր դար» օրաթերթ 1895, Թիֆլիս, №№ 175, 176:
Newspaper "Nor Dar" 1895, Tiflis, №№ 175, 176.
13. Վեհափառ կաթողիկոսի անուանակոչութեան տարեդարձը 1895, «Տարազ», Թիֆլիս, № 2, էջ 27:
The anniversary of the consecration of the Patriarch 1895, "Taraz", Tiflis, № 2, p. 27.

Асмик О. Амирджанян, *Институт истории НАН РА, к.и.н.,*

«Правила» Геворга Суренянца написанные для церквей Грузиноимеретинской епархии армянской апостольской церкви (1895 г.)

Резюме

3 февраля 1894 года епископ Геворг Суренянц был назначен предводителем Грузинской и Имеретинской епархии Армянской Апостольской Церкви. На момент назначения епископа в епархии существовало множество нерешенных

вопросов. С 1894 года епископ начинает реформаторскую деятельность в епархии.

В статье представлены «Правила» Геворга Суренянца (1895 г.), особенно предназначенные для духовный уполномоченнов и викарий. Выбор этих двух категорий не был случайным: через благочинных осуществлялся контроль над всей деятельностью духовенства, а ерецпохи вели хозяйственную жизнь епархии. Правила подтверждают или устанавливают права и обязанности двух сословий, в том числе: добросовестное выполнение духовных обязанностей, последовательность в церковных обрядах, своевременное и надлежащее выполнение церковной документации и другие. С помощью анализа материалов, содержащихся в «Правила», была предпринята попытка представить общую картину проблем, озвученных новым архиереем, цель которого заключалась в установлении внутреннего порядка в епархии.

Ключевые слова: Архиепископ, Геворг Суренянц, Грузинская и Имеретская епархия, Армянская Апостольская Церков, каноны, духовенства, предводитель.

Hasmik H. Amirjanyan, *Institute of History of the NAS RA, PhD in Histoy,* **The "Rules" of Gevorg Surenyants written for the Churches of the Georgian-Imeretian diocese of the Armenian apostolic church (1895)**

Sammary

On February 3, 1894, Archbishop Gevorg Surenyanc was appointed as the head of the Georgian and Imeretian Diocese of the Armenian Apostolic Church. At the time of the bishop's appointment, there were numerous unresolved issues in the diocese. Starting in 1894,

the bishop began reform activities in the diocese.

The article presents the “Rules” of Gevorg Surenyants (1895), specifically intended for spiritual agents and economic administrator (yerecpokh). The choice of these two categories was not accidental: spiritual agents were responsible for overseeing the entire activity of the clergy, while yerecpokhs managed the economic affairs of the diocese. “Rules” reaffirm or establish the rights and responsibilities of the two classes, including: the conscientious fulfillment of spiritual duties, consistency in church rituals, timely and proper completion of church documentation and others. Through analyzing the materials contained in canons, an attempt was made to provide a general overview of the problems raised by the newly appointed bishop, whose goal was to establish internal order in the diocese.

Key words: Archbishop, Gevorg Surenyanc, the Georgian and Imeretian Diocese, Armenian Apostolic Church, the Rules, clergy, the lider of the Dioces.